

616.053.2  
S-38

2438

1394

2003

Եւրա Արքայի Համար Գլուխութեա  
Տուրքի թագավորութեան Առաջնորդութեան  
616.053.2 ԱՐ

5-38

1890. Տաշ. 10.

# ՄԱՆՈՒԿՆԵՐԻ

ՄԱՐՍՈՂՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԻ ՄԻ ՔԱՆԻ

ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԸ



1008  
36340

Գ Ե Հ Յ

Ֆեզկ. Գրիգոր Գուղարեան Տէր-Գրիգորեանց (Դ.Զ.Ա.Բ.Ց.Բ)

(Արտաստղած «ՄՈՒԲՃ» ամսագրից)



ԹԻՖԼԻՍ  
ՏՊԱՐԱՆ Մ. Գ. ԱԽՏԻՆԵԱՆՑԻ  
Տիպոգրաֆիա Մ. Դ. Ռոտինանց, Խ. Գոլ. պրոսպ. սե. ձ. № 41.  
1889

16415

2010

Дозволено цензурою Тифлисъ. 20-го Сентября, 1889 года.



ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ՄԱՐՍՈՂՈՒԹԵԱՆ ԳՈՐծԱՐԱՆՆԵՐԻ ՄԻ ՔԱՆԻ ՀԻՒԱՆ-  
ԴՈՒԹԻՒՆՆԵՐԸ:

Սի ժողովուրդ, որ այնքան զարգացած է, որ գիտէ թէ ինքը  
ինչ պէտք է ուտէ և իւր մանուկներին ինչ պէտք է ուտեցնէ, ի  
հարկէ, քաղաքակրթութեան ասպարէզի մէջ բաւականին յառաջարէմ  
ժողովուրդ պէտք է համարւի: Բայց ո՞րքան ցաւալի է տեսնել մի  
ժողովուրդ, որը զրկւած է քաղաքակրթութեան այդ բարիքից, մա-  
նաւանդ մանուկների վերաբերութեամբ: Քանի՛ քանի՛ մանուկներ ի-  
րանց մատաղ հասակում զոհ են գնում ծնողների տղիտութեան մեր  
երկրում, այդ ի հարկէ մի գաղտնիք չէ, և պատճառը ըստ մեծի  
մասին այն է, որ ծնողները չը գիտեն թէ ի՞նչ և ի՞նչպէս պէտք է  
ուտեցնեն իրանց մանուկներին: Մի տեղ զուք տեսնումէք, որ  
մանուկը հիւանդ է այն պատճառով, որ մացրը վեց ամսւայ հա-  
սակում տանձ է ուտեցրել իւր միակ մանկանը, միւսը՝ տամ և մէկ  
ամսւայ հասակում կորիգներով կեռաս է ուտեցրել, մի ուրիշը՝ տա-  
րին չը լրացած, միս է ուտեցնում կամ երկու տարեկան հասակում  
պատւայ լրիի, թթու խիար և այլ գիւարամարս բաներ է ուտեց-  
նում: և երբ երեխան հիւանդանումէ, բժշկից—բժշկի մօտ է ման ա-  
ծում, բայց կերակուրը չի փոխում, կարծելով, որ զեղերը բա-  
ւական է փոխել, որ մանուկը բժշկի: Եւ երբ բժիշկը սկսում է  
հասկացնել, թէ ի՞նչ պէտք է ուտեցնեն մանկանը և ի՞նչպէս՝ այն  
ժամանակ պառաւները պատասխանում են, որ նոքա տասնեակ երեխաներ  
են մեծացրել այսպէս: բայց մոռանում են, որ թոյլերը վաղուց արդէն գլ-  
լորւել են գերեզման, իսկ միայն ամուր կազմածք ունեցողները մնացել  
են և թէ ամեն երեխայ նոյցա գործածած կերակուրները չէ կարող

Տարսել և եթէ ոչ իւր կեանքը, գոնէ իւր առողջութիւնը կը տուժէ:

Այս՝ այդ իսկ պատճառով կան մի քանի ճշմարտութիւններ մանուկներին կերակրելու վերաբերութեամբ, որոնք պէտք է մի քանի տասնեակ տարիների ընթացքում կրկնւեն, որ ժողովրդեան սեպհանութիւն դառնան և խեղճ մանուկներին հիւանդութիւններից փոքր ի շատէ զերծ պահեն:

Դիմաւորներն են:—Ծիծ աւող մայրը կամ ծծմայրը<sup>1)</sup> պէտք է այնքան առկունութիւն ունենայ, որ երկու ժամը մի անգամ ծիծ տայ մանկանը, իսկ զիշերը վերջին անգամ ժամը տասն և մէկին և այնուշեաւ միւս առաւօտը ժամը վեցին: Երկու տարին լրանալուց առաջ չը պէտք է երեխային միս տալ ուտելու: Զօրքորդ տարում պէտք է երեխային միայն միրգ տալ և այն էլ հասածը, առանց կորիզների և, աւելի լաւ է, եփած: Առաջին երեք տարին երեխայի զլսաւոր կերակուրը պէտք է լինի կաթ՝ սկիզբը մայրականը և ապա՝ կոլինը: Եթէ կովի թարմ կաթ դժւար է ունենալ, այն ժամանակ աւելի լաւ է այծ կամ էշ պահել, և, չոր կերակուր ուտեցնելով նրանց, այդ կենդանիների կաթով կերակրել երեխային: Մեծերի կերակուրը երեխայիք չորս տարուց առաջ չը պէտք է ստանան...<sup>2)</sup>: Ալիւրեղէն, այն է՝ հաց և զանազան կասկեր (կրուպ) վեց ամսից առաջ չը պէտք է տալ երեխային և այն էլ շատ չափաւոր քանակութիւնով: Եթէ այդ կանոնները ճշգութիւնով պահւեն, մենք փորձով գիտենք, որ շատ քիչ կը պատահի, որ երեխաների մարտութեան գործարանները հիւանդանան:

Մանուկների մարտութեան գործարանների հիւանդութիւնները նկարագրելով մեր զիտաւորութիւնը այն չէ, որ խորհուրդ տանք, թէ ի՞նչպէս պէտք է բժշկեն, այլ այն է՝ թէ հիւանդութեան ժամանակ ծնողները ի՞նչ պէտք է ուտեցնեն և ի՞նչպէս պէտք է հիւանդ մանուկներին պահեն:

<sup>1)</sup> Մանրամասնութիւնները կարդա մեր «Մանկատածութեան» մէջ՝ երես 29, 30, 31 և 32, նունպէս 40, 41 և 45:

<sup>2)</sup> Կարդա մեր «Մանկատածութեան» մէջ՝ 104, 105, 109, 110, 118, 119, 120, 121, 122 և 123 երեսները:

Ամենից շատ պատահող հիւանդութիւնները սոքա են. Դիսպեսի, բարակ աղիքների կատար, հաստ աղիքի բորբոքումն, դիզենտերի (թանձն) և երեխաների խօլերա:

### ՑԱՆԿԱՐԾԱՀԱՍ (աւագ) ԴԻՍՊԵԳՈՒՅԻ:

Դիսպեսիսին արտայայտում է նորանով, որ մանուկը ախորժակը կորցնում է, բղիում է, կերածը փախում է, փորի մէջ շանջու ունի, կղկղանքը կանանչ կամ գեղնագոյն կանանչ է՝ խառն սպիտակ կամ գեղնագոյն կորուած կաթի կտորներով, ըստ մեծի մասին ժըլժւած հոտ ունի, արտավիժում է երբեմն շուտ շուտ և երբեմն փորհապութիւն ունի: Հիւանդութիւնը պէտք է, որչափ կարելի է, շուտով բժշկել, ապա թէ ոչ կամ աղիքների բորբոքումն յառաջ կը գայ, կամ խօլերա, կամ երկարատե զիսպեպիի կը փոխափի, որը շատ ժամանակ է քաշում և զժւար է բժշկում:

Այնուղի, ուր մայրը ծիծը անկանոն է տալիս, իսկոյն պէտք է սկսի երկու՝ մինչև անգամ երեք ժամը մի անգամ ծիծ տալ կամ աւելի ուշ, եթէ երեխան չի պահանջում, հարկաւոր չէ նորան ստիպել որ ուտէ. իւրաքանչիւր ծիծ տալուց յետոյ երեխայի՝ բերանը հարկաւոր է մաքուր ջրով սրբել: Երբեք չը պէտք է երեխային ծիծ տալ նորան հանգստացնելու համար, երբ նա լաց է լինում փորի ցաւի պատճառով, այդ կը նշանափէ որ նորա կերածը չէ մարսւել, այլ քայքայւել է, ուստի նորա կերածը նոյնպէս կը քայքայւի և ցաւ կը պատճառի: Խակ եթէ ծիծ չը տալ և թողնել, որ ստամոքսը հանգստանց կամ աղիքները դատարիւեն, այնուհետեւ կերածը աւելի լաւ կը մարսւի և ցաւ չի պատճառի: Ծիծ տուղ մայրը և ծծմայրը չը պէտք է հոգեկան յուզմունքներին կամ մարմնական տաժանելի աշխատանքներին ենթարկեն իրանց:

Եթէ երեխային կովի կաթով են մէծացնում, պէտք է որ ծնընդեան առաջին շաբաթը մի մասը կաթ վեր առնեն և չորս մասը եփած և սառցրած ջուր, երկրորդ շաբաթը՝ մի մասը կաթ և երեք մասը ջուր, երրորդ շաբաթից մինչև չորս ամիսը՝ երկու մասը ջուր և մէկ մասը կաթ, հինգ և վեցերորդ ամիսները՝ մէկ մասը ջուր, մէկ մասը կաթ: Վեց—ութ ամիսները՝ երկու մասը կաթ, մէկ մասը ջուր,

ութ - տասն ամիսները՝ երեք մասը կաթ, մէկ մասը ջուր: Կաթը պէտք է նոր կթած լինի, ստանալուց յետոյ խկոյն պէտք է եփ տալ 15 րոպէից մինչև կէս ժամ, ապա նեղ բերանանի մաքուր շիշերի մէջ ածել, բերանները բամբակի խցանով փակել և սառը տեղում պահել: Աւելի լաւ է, որ կովը չոր կերակուր ստանում լինի ամառ ժամանակը: Կաթի խառնուրդը, ամեն անգամ երեխային տալուց առաջ, պէտք է տաքացնել մինչև 28<sup>0</sup> Բ.<sup>1)</sup>

Եթէ երեխային նոր են ծծից կարել, խկոյն պէտք է սկսել ծիծ տալ: Իսկ եթէ հիւանդութեան ժամանակ ստիպւած են կովի կաթ ուտեցնել, պէտք է մի քանի օր կաթ չը տան և հետևեալ կերակուրներից մինը դրդ ածեն:

Չու ի սպիտակուցի ջուր: Վեր առնել մէկ ձուի սպիտակուց և մէկ թէկի բաժակ (14 հացի գդալ) եփած և սառցրած ջրի մէջ լաւ արորել, այնքան որ սպիտակուցը ջրի հետ միատեսակ խառնւի, մի քիչ աղ անել և ապա բարակ գործած կուտի կամ շղարշի (պեղ) միջով քամել:

Երկու թէկի գդալ վարսակի (ոռուշ) կասկը (գրուպ) եփում են մէկ թաս ջրի մէջ՝ մի փոքր աղ խառնած և ապա քամում են բարակ կուտի միջով:

Մէկ թէկի գդալ գելատինը (պոդո) լաւ խառնում են մէկ թէկի բաժակ ջրի հետ, մինչև որ բոլորովին լուծւի և ապա քամում են կուտի միջով: Կամ ուղղակի հորթի մսից արգանակ են պատրաստում:

Այս կերակուրներից մէկը սկսում են տալ. երբ հիւանդութիւնը թեթեանում է, խառնում են նորա մէջ փոքր քանակութիւնով կաթ և կամաց կաթի քանակութիւնը աւելացնում են, երբ տեսնում են, որ երեխայի կղկանքը բնական կերպարանք է ստանում, այն է՝ միատեսակ՝ զեղին, բայց ոչ ջրալի և ոչ շատ սերտ:

Երեխային տալու կաթի խառնուրդների մասին արդէն մենք երբ «Մանկատածութեան» մէջ խօսել ենք, թէ ո՞ր հասակում ո՞ր քանակութիւնով և օրը քանի՛ անգամ պէտք է տալ, այս կանոնները

<sup>1)</sup> Մանրամասնութիւնները կարդա մեր «Մանկատածութեան» մէջ երբս 54—60.

հիւանդութեան ժամանակ աւելի ճշգիւ պէտք է պահել վերը յիշած կերակուրների վերաբերութեամբ (տե՛ս երես 54 և 59). բայց այսուեղ մի քանի անհրաժեշտ կանոնները կրկնում ենք: Երեխային կերակուրը կամ կաթի խառնուրդը երեք-չորս ժամը մի անգամ պէտք է տալ, իսկ զիշերը վերջին անգամ տասն և մէկ ժամին և այսուհետեւ մինչև միւս առաւտուայ վեց ժամը ոչինչ չը տալ: Առաջին ամիսը՝ երեխային ամեն անգամ պէտք է տալ հնդից մինչև վեց հացի գդալ և օրը մինչև ութն անգամ: Երկրորդ ամիսը՝ օրը վեց անգամ, իւրաքանչիւր անգամ տասնից մինչև տասներկու հացի գդալ: Այսուհետեւ ամենաշատը իւրաքանչիւր անգամ մինչև տասնեւվեց հացի գդալ:

Ըստհակառակին, եթէ երեխան մինչև հիւանդանալը ալիւրեղէն շատ էր ստանում, հարկաւոր է վերը յիշած վարսակի ջրի կամ հորթի մսի արգանակի հետ ուղղակի կովի կաթ խառնել և այսպէս տալ: Կաթը կարելի է խառնել նոյնպէս կակաօի (հարդարաց) թէկի հետ: Մէկ թէկի գդալ կակաօի վերաց մի բաժակ եռ եկող ջուր են ածում, կէս ժամ թողնում են և ապա կաթի հետ խառնում: Երեք մասն այդ թէկն են վեր առնում և մի մասը կովի կամ այծի եփած կաթ:

Յաւի ժամանակ երեխայի փորին քսում են մի օր և իցէ տաքացրած ձէթ և ֆլանելով փորը փաթաթում են:

### ԵՐԿԱՐԱՑԵՒԻ (ՔՐՈՒՀԻԿԱՀԱՆ) ԳԻՍՊԵՊՍԻ:

Երեխայի կղկղանքը սաստիկ հոտ ունի, և շողիի մեծ մեծ կտորտանքի հետ խառնուած է: Երբեմն երեխայի փորը կապ է, երբեմն շուտ շուտ լուծում է: Երբեմն երբեմն երեխան փսխում է մեծ քանակութիւնով շողիի խառնուրդ, ախորժակ չ'ունի, ստամոքսը լայնացած է, երբեմն կասես երեխան խեղբում է, փորը փքւած է քամիներով, հիւանդութիւնը շատ երկարատեւ է, երեխան նիշար է և թոյլ:

Այսպիսի դէսկերում՝ կերակրելու մասին խստութիւն պէտք է պահպանել: Կերակուրը մէկ կամ կէս ժամը մի անգամ տալ բայց

իւրաքանչիւր անդամ մէկից մինչեւ երեք հացի գդալ: Ոչ մի կերպով չը պէտք է տալ երեխային ոչ իւղալի կերակուր և ոչ այլիւրեղին: Կաթի քանակութիւնն էլ պէտք է շատ չափաւոր լինի: Մի բաժին կաթը խառնում են երեք բաժին սովորական թէյի հետ կամ ընկուզի տերևների թէյի հետ, գարու սուրճի հետ: Գարին աղանձում են, փոշիացնում, ապա ինչպէս սուրճ մէկ կամ երկու թէյի գդալը մէկ թաս ջրի մէջ եփում են: Բայց աւելի լաւ է կաղնիի սուրճի հետ խառնել: Կաղնիի պառղները սուրճի պէս աղանձում են և փոշիացնում: Այս սուրճը (այսինքն փոշին) ծախտում է իւրաքանչիւր գեղատան և անուանում է գլանդուլէ քվերկուս տօստէ: Մէկկամերկու թէյի գդալ փոշին մէկ թաս ջրի մէջ չափաւոր կերպով եփում են, ապա աւելացնում են շաքար և կաթ և տալիս են երեխային: Օրը մի քանի անդամ տալիս են շիշի մէջ եփած տաւարի մի արգանակ: Կէս գրւանքայ տաւարի միսը մանր կոտորում են, ածում են մէկ շիշի մէջ և բերանը խցանով պինդ փակում: յետոյ շիշը ձգում են մի ջրով լիքը կաթսայի մէջ, որի տակը մի ժամանակ ընթացքում հանդարտ կրակ են անում: Այնուհետև շիշը հանում են, նորա միջի պարունակութիւնը մղում են կտաւի միջով: Ստացած պղտոր և մուք գեղնագոյն հեղուկը ամբողջ օրւայ ընթացքում փոքր առ փոքրը թէյի գդալով տալիս են երեխային: Խնչպէս վերը յիշեցինք, բոլոր կերակուրները հարկաւոր է մէկ կամ կէս ժամը մի անդամ տալ, ամեն անդամ մէկից մինչեւ երեք հացի գդալ: Երբեմն օգտակար է լինում գելատինի հեղուկը, որի վերայ աւելացնում են մի փոքր ուօմ կամ լաւ զինի: Գելատինի հեղուկը կարելի է պատրաստել տանը հորթի ոտներից: Նոյնպէս խորհուրդ են տալիս՝ փոքր քանակութիւնով զլուխ զինիներ տալ, զորօրինակ, խերես, մալազա: Եթէ յաջողի, որ երեխայի շողիաւոր փախումը վերջանաց, ախորժակը լաւանաց, կղկղանքը կանոնաւոր և բնականին նման դառնայ՝ այն ժամանակ կարելի է զգուշութիւնով կաթ սկսել տալ, բայց միշտ խառնած կամ հորթի մի արգանակի հետ կամ վարսակի շողիաւոր հեղուկի հետ: Սկիզբը պէտք է կաթը փոքր քանակութիւնով խառնել և տեսնել, եթէ երեխան լաւ է մարտում, այնուհետև կաթի քանակութիւնը աւելացնել: Կարելի է նոյնպէս դեռ

կաթը չը տալ, այլ սկսել կաթի շճուկը կամ շիթը (հօլէ՛, սկզբանութիւն) տալ և ապա մի քանի ժամանակից յետոյ սկսել կաթ տալ: Կաթի շճուկը կամ՝ շիթը տանն էլ գլուխն պատրաստել. բայց կարելի է դորա համար զեղատանը գնել հարկաւոր նիւթը, այն է տրօխիս սցի սերիպարի: Մի համը մէկ և կէս բաժակ եռացող կաթի մէջ լուծում են. երբ բնապանիրը բաժանուում է, քամում են բարակ կտաւի միջով և ապա փոքր փոքր քանակութիւնով հեղուկը տալիս են երեխային: Եթէ երեխայի փոքր կապէ, այն ժամանակ պահանջում են տրօխիս սցի սերիպարին դատի, իսկ եթէ աւելորդէ լուծում, այն ժամանակ վեր են առնում տրօխիս սցի սերիպարի ալիւմ ինա ատի:

### ԲԱՐԱԿ ԱՂԻՔՆԵՐԻ ՅԱՆԿԱՐԾԱՀԱՍ ԿԱՏԱՐ (Կարենք):

Այս կատարի գլխաւոր յատկութիւնը այն է, որ կղկղանքը մեծ քանակութիւնով է զուրս գալիս, լինում է հեղուկ, ջրալի. սկզբը մուշ գոյն ունի, յետոյ կանանչաւոն գեղին, վերջապէս անդոյն, ինչպէս ջուրը: Կերակուր ընդունելուց մի փոքր յետոյ սկսում է խիթքը (շանջաւած) և ապա ձայնով և ուժգնութիւնով, ինչպէս խցանը հանած տակաւից, դուրս է խփում կղկղանքը: Հիւանդը սաստիկ ծարաւ ունի, մէզի քանակութիւնը շատ փոքր է: Հիւանդութիւնը ըստ մեծի մասին յառաջ է գալիս միենոյն պատճառներից, որոնցից յառաջ է գալիս գիսպեպսին. ուստի, հիւանդութեան առաջն առնելու համար, հարկաւոր է այն կանոնները ճիշդ պահել, որոնց մասին արդէն խօսեցինք: Եթէ հիւանդութեան պատճառը ծծից կտրելն է, իսկոյն պէտք է ծծմացը գտնել. այս կը լինի ամենալաւ բժշկութիւնը և գեղորացքը աւելորդ են: Իսկ եթէ ծծմացը գտնել չէ կարելի, այն ժամանակ մի քանի օր պէտք է կրվի կաթը անպատճառ թողնել և ոչ մի կերպ չը գործածել, այլ նորա փոխանակ տալ արաբական խէժի: (Գումմի արքէնէն) ջուր, որը պատրաստում են այսպէս: —Վեր են առնում մէկ բաժակ եփ տած և սառցրած ջուր և մէջը տրորում են կէս կամ մէկ թէյի գդալ արաբական խէժի փոշին այնքան՝ մինչեւ որ լուծւի: Կամ տալ ձւի սպիտակուցի ջուր սոմով մէկ կամ երկու թէյի գդալ ուոմ մէկ թէյի բաժակ հեղուկի հետ,

կաղնիի պտղի սուրճ, սովորական թէցի կամ վարսակի շողիաւոր ջուր: Այս բոլորը պէտք է տալ անպատճառ առանց կաթի: Երբ կղկղանքը կը թանձրանայ և աւելի ներկած գոյն կը ստանայ, ժարաւը կը պակասի, մէզի քանակութիւնը կ'աւելանայ. այն ժամանակ հարկաւոր է փոքր առ փոքր լիշեալ հեղուկների հետ կաթ խառնել, պահպանելով վերը լիշած կանոնները: Մարդար վերայ հարկաւոր է մեծ ուշադրութիւն դարձնել, վասն զի հիւանդը շատ հեղուկ է կորցնում կղկղանքի միջոցով, արիւնը սկսում է թանձրանալ. վերջինս կարող է շատ տխուր հետեանք ունենալ: Սի անգամից շատ չը պէտք է խմացնել, որովհետեւ եթէ հիւանդութեան պատճառը ծծից կտրելն է, այն ժամանակ շատ հեշտութիւնով կարող է երեխաների խօլերա յառաջ գալ: Պէտք է թէցի գդալով ռոմի ջուր տալ. մէկ կամ երկու թէցի գդալ ռոմը խառնել մէկ թէցի բաժակ սառը ջրի հետ կամ ածել մէկ թէցի բաժակի մէջ սօդացի ջուր, կէս ժամ թողնել, որ կանգնի, ապա խառնել նորա մէջ մէկ կամ երկու թէցի գդալ կոնեակ. այդ խառնուրդների մէկից երբեմն երբեմն թէցի գդալով տալ հիւանդին: Եթէ երեխայի երեսը սկսում է սուր կերպարանք ստանալ, գաղտունը (Քննական) փոս է ընկնում, ձեռքերը և ոտքերը սառչում են, այն ժամանակ ռոմը կամ կոնեակը աւելի պէտք է վեր առնել: Հիւանդի փորին՝ հէնց հիւանդութեան սկզբից՝ հարկաւոր է տաքացնող կոմպրեսներ դնել. այն է, վեր առնել մի կոտր կտաւ, չորս ծալել, սառը ջրում թաց անել, ապա լաւ քամել, փռել. երեխայի բոլոր փորի վերայ, նորա վերայ փռել մոմած կտաւ, սորա վերայ մի կոտր ֆլանել և ապա այդ ամենը փորի վերայ պնդացնել մի լայն երեսարբիչով: Երեք ժամը մի անգամ հարկաւոր է թաց կտաւը նորողել, այսինքն՝ նորից թաց անել, քամել և յետոյ փորին կապել: Մոմած կտաւը և վելանը միջին պէտք է լայն լինեն թաց կտաւից:

ԲԱՐԱԿ ԱՂԻՔՆԵՐԻ ԵՐԿԱՐԱՏԵՒ ԿԱՏԱՐ:

Այս հիւանդութիւնը յառաջ է գալիս բարակ աղիքների յանկարծահաս կտարի մի քանի անգամ կրկնելուց կամ երկար ժամանակ տեևլուց և սովորաբար այդ մանուկները միւնոյն ժամանակ խողախտով (ոկրքառավուց) հիւանդ են կամ արդէն ոսկրակաղութիւն

(«առեկարգ») ունեն: Հիւանդութիւնը, ըստ մեծի մասին, տարածւում է նաև հաստ աղիքների վերայ (սորա մասին յետոյ): Փորի մորթը փայլ է ստանում, փորը փքւում է, փքած աղիքների գծագրութիւնը պարզ երևում է և կարելի է ձեռքով շօշափել: Կղկղանքը ջրալի է, սարսափելի հոտ ունի, երեխան արտավիժմում է սաստիկ ցաւեր զգալով կարծ ժամանակամիջոցում մի քանի անգամ միմեանց ետևից և ապա մի քանի ժամ հանգստանում է: Այս երեխաները սովորաբար շատ նիշարում են, սակաւարիւն են դառնում, նոցա երեսի մորթը ծերերի պէս ծալծլում է ինչպէս կնծիռներ: Այստեղ ամենից առաջ, ինչպէս համրնթաց զիսպեկտի ժամանակ, որշափ կարելի է, խիստ պէտք է լինել կերակրելիս, այն է՝ փոքր քանակութիւնով որոշեալ ժամանակամիջոցներում: Այդ հիւանդների վերաբերութեամբ մանաւանդ պէտք է խիստ լինել, որովհետեւ սոքա սաստիկ քաղց են զգում և ապահարար ահազին քանակութիւնով հաց կամ այլ ալիւրեղին կերակուրներ են կուլ տալիս՝ վնասելով իրանց մարտզութեան հիւանդ գործարանները: Եթէ մայրը չի կարող ծիծ տալ և ծծմայր գտնելը գծւար է, այն ժամանակ պէտք է կովի կամ այծի լաւ կաթ զանել: Առաջ պէտք է եփ տալ, ապա սառցնել և այնպէս ուտեցնել. երեք հացի գդալ կաթ, երկու հացի գդալ եփած ջուր, մի հացի գդալ կրի ջուր (որը ամեն զեղանցում կարելի է ստանալ և անուանում է աքւա կալիցիս): Այս քանակութիւնը հարկաւոր է երկու ժամը մի անգամ տալ կամ սորա կէսը՝ մի ժամը մի անգամ: Եթէ երեխան ծարաւ ունի, հարկաւոր է փոքր քանակութիւնով (թէցի գդալով) երբեմն երբեմն ջրախառն զինի տալ: Եթէ կաթը վնասում է, հարկաւոր է շճուկ տալ, որը պէտք է պատրաստել արօիխացի սերիպարի ալումնատիփ միջոցով: Վեր են առնում սորա մի հատը և մէկ ու կէս թէցի բաժակ եռացող կաթի մէջ լուծում են, պանիրը տակը նառելուց յետոյ քամում են, սառցնում և հեղուկը տալիս են երեխային: Ոչ մի կերպ ալիւրեղին չէ կարելի տալ երեխային, ոչ եղիպացրեանի (սիմինդրի) ալիւր (մօնդամին), ոչ արրօւրուտ և ոչ լեզումնաւոր: Աւելի շուտով կարելի է փորձել շիշի մէջ եփած տաւարի մսի արգանակը: Երբեմն օգտաւէտ է լինում փորին թաց կոմպրեսներ կապելը, որոնք չորս ժամը մի անգամ պէտք է փոխել:

ՀԱՍՏ ԱՂԻՔՆԵՐԻ ՅԱՆԿԱՐԾԱՀԱՍ ԵՒ ԵՐԿԱՐՄԱՏԵՒ ԲՈՐԲՈՒՅՈՒՄՆ:

Այս հիւանդութիւնը զլիսաւորապէս հաստ աղիքների մէջն է: Յանկարծահաս ձեւը երեւան է գալիս միանդամից, կարծես թէ առանց պատճառի: Յանկարծ մեծ տաքութիւն, խիթք, արիւնախառն շողիաւոր կղղանք և սաստիկ նքոց—այս է հիւանդութեան սկիզբը և կարող է մի քանի օրում մահով վերջանալ: Կամ երեխան կարող է առողջանալ այն է նա աւելի և աւելի ուշ է արտավիժում, արեւնը և շողին կղղանքի մէջ կամաց կամաց պակասում են, կղղանքի գոյնը և խոռոշիւնը դառնում են բնական: Երբեմն այս հիւանդութիւնը յառաջ է գալիս երկարատեւ զիսպեպսից կամ բարակ աղիքների երկարատեւ կատարից, երբ հիւանդը ջրալի կղղանքի փոխանակ աւելի և աւելի շողի է արտավիժում: Երեխան արտավիժելոց առաջ անհանդիստ է, յանկարծ զունատում է, կարծես թէ ցաւերից հոգին տալիս է և արտավիժածը միայն շողիի կտորներ են և այն էլ փոքր քանակութիւնով. կղղանքը սկզբում անհու է լինում, իսկ մի քանի օրից յետոյ սկսում է սաստիկ հոտ ունենալ, բայց հետո միշտ փոքր քանակութիւնով արիւն կայ խառնած և երբեմն թարախ և այլ թաղանթի նման կտորներ: Այս երկրորդ ձեւը շատ անգամ տաքութիւն չ'ունի:

Յետոյքի շուրջը, ազգրները, կրոնները կղղանքի կծուութիւնից կիրքեր են կրում իրանց վերայ, փորբաժականումէ, մորթը գունատ և թառամած է լինում, առանց առաձգականութեան: Եթէ շատ ժամանակ չէ, որ երեխային ծծից կտրել են, իսկոյն հարկաւոր է ծիծ տալ, ապա թէ ոչ, ոչ մի կենդանու կաթ՝ ոչ կովինը, ոչ այծինը՝ այդ հիւանդները չեն կարողանում մարսել: Խնչ կ'ուզեն կենդանու կաթի հետ խառնեն, միեւնոյն է, հիւանդները չեն մարսում: Այդ իսկ պատճառով, հարկաւոր է վերը ցիշած կերակուրներին դիմել: — Արաբական խէմի ջուր, վարսակի շողի, սովորական թէ, կաղնիի սուրճ: Իսկ յետոյ փոքր առ փոքր հարկաւոր է սկսել կաթ խառնել: Այս հիւանդութեան մէջ ամենից օգտաւէս է նեալիի երեխաների ալիւրը: Առաջ վեր են առնում մի հացի գղալ ալիւր և ինը հացի գղալ ջուր, մի քանի ժամանակից յետոյ, երբ երեխայի կղղանքը աւելի լաւ կերպարանք է ստանում, սկսում են կաթ

ևս խառնել, զորօրինակ՝ մի մասը ալիւր, եօթը մասը ջուր և երեք մասը լաւ կաթ, յետոյ ժամանակով մի մասը ալիւր, հինգ մասը ջուր և հինգ մասը կաթ և վերջապէս կարելի է ալիւրը ուղղակի կաթով եփել: Երեխայի թողութեան (նուազութեան) առաջն առանելու համար հարկաւոր է տալ ոսմի կամ կոնեակի ջուր կամ նոցա վարսակի շողիի հետ խառնել և այնպէս տալ: Երկու թէի գդալից մինչեւ չորս թէի գդալ վեր են առնում ոսմ կամ կոնեակ և խառնում են մի թաս լիքը վարսակի շողիի հետ և այդ քանակութիւնը մի օրւայ մէջ խմացնում են:

Գ Ի Զ Ե Ն Տ Ե Ւ Ի:

Այս հիւանդութիւնը սկսում է յանկարծ, մինչդեռ երեխայիք սորանից առաջ փորկապութիւն ունէին: — Տաքութիւն, փորացաւ, սաստիկ խիթք, նքոց և արտավիժումն: Հիւանդը սկզբում միմեանց ետևից շուտ շուտ է արտավիժում, բայց փոքր քանակութիւնով: Կղղանքը շողիի, գոգողի պէս է, ապակիի նմանութիւն ունի և միմեանց կպած կտորներից է բաղկացած, գիշերւայ անօթի մէջ կամ սաւանի վերայ գողգողում է: Երեխան իւրաքանչիւր անգամ արտավիժելու համար շատ ժամանակ է գործ դնում: Շուտով կղղանքը փոխում է, շողիաւոր կտորների հետ խառնած են արիւնախառն մուք-կանաչ կոյսեր, որոնք, եթէ արիւնը շատ է լինում, ինչպէս գորշ-կարմիր կտորներ են երեւում, ջարդած մսի նմանութիւն ունին: Մորթը սաստիկ դունատում է, երեխան սաստիկ նիշարում է և կերակուրից հրաժարում, մարմինը սառչում է և զօրութիւնը պակասում: Երբեմն երկրորդ օրից կղղանքը փոխում է, արտավիժածը շողեաց թաղանթի խոշոր և միմեանց հետ կպած կտորներից է բաղկացած, սորանից յետոյ սաստիկ նքոցով դուրս են գալիս արիւնախառն շողիի կտորներ: Նատ քիչ անգամ պատահում է, որ, եթէ հիւանդութիւնը երկարատեւ է լինում, կղղանքը աւելի թարախ պարունակող կտորներիցն է բաղկացած, որոնց հետ խառն են չափաւոր քանակութիւնով թաղանթի կտորներ, առանց նքոցն են դուրս գալիս, իսկ ինը կղղանքը սարսափելի հոտ ունի: Այս հիւանդները արագութեամբ են, կապտում,

արիւնը թանձրանում է կամ վախճանում են կամ հիւանդութիւնը երբեմն դէպի լաւն է գնում, երբեմն դէպի վառը, նոքա կենդանի են մնում, բայց ոչ առողջացած:

Ամենից առաջ հիւանդի շուրջը խիստ մաքրութիւն պէտք է պահել: Ծծի երեխաներին օրը երեք անգամ, խակ մեծերին օրը երկու անգամ լողարանի մէջ պէտք է լւանալ  $27^{\circ}$ — $28^{\circ}$  ր. հնգից մինչև տասն րոպէ տևողութիւնով. աւելի սառը ջուրը սաստիկ վնասում է այս հիւանդներին. լւացքը, գիշերւաց անօթը, կղղանքը՝ իսկոյն սենեակից պէտք է հեռացնել և եռացող ջրով լւանալ: Հաստատուն կերակուր (հաց, միս) մինչև անգամ հասակաւոր երեխաներին չը պէտք է տալ: Կաթը կրի ջրի հետ կամ կաղնիի սուրճի հետ խառն, սովորական թէց գաղջ, եթէ երեխան թոյլ է, մի քիչ ոսմով. մեծ երեխաներին ս'ազօ գինով շինած, մսի արգանակ շիշի մէջ պատրաստած՝ հացի գլամու—ահա սոքա են հիւանդների խսկական կերակուրները: Թաց կոմպլեմեներ նոյնպէս կարելի է գործ ածել, բայց աւելի լաւ է հիւանդի փորը փաթաթել տաքացրած չոր ասուեղին կամ բրդեղին շորերով. սոքա երեխաներին շատ դուրեկան են, ցաւերը ամոքում են և հանգստացնում:

ԵԲԵԽԱՆԵՐԻ ԽՈԼԵԲԱ:

Երեխաների խոլերան կամ յառաջ է գալիս աղիքների վերը ցիշած հիւանդութիւնների մէկից կամ բորոքին առողջ երեխան մկում է արտավիժել ահազին քանակութիւնով անգոյն կղղանք, միւնոյն ժամանակ մէկ մէկու ետևից փախել, տաքութիւնը և ծարաւը ահազին են, շուտով հիւանդը զօրութիւնից ընկնում է, գաղտունը փոս է ընկնում, զլիսի ոսկորները իրանց զրութիւնը փոխում են, երեսը քաշում է, մորթը կապտում, շնչառութիւնը սառչում է և դժւարանում: Այդ խակ պատճառով հարկաւոր է շտապել երեխային օգնութիւն հասցնել: Ամենից առաջ պէտք է գաղարել երեխային կերակուր տալուց, մինչև անգամ մօր կամ ծծմօր կաթը ըլ տալ, քանի որ երեխան փախում է և փորլուծութիւն ունի: Երեխային հարկաւոր է օրը երեք անգամ լողացնել  $28^{\circ}$ — $32^{\circ}$  ր. տաքութիւն ունեցող ջրի մէջ, լողացնելու ջրի մէջ խառնում են մա-

նանեխի հիւթ.—վեր են առնում երեք հացի գղալ մանանեխ, կապում են անձեռոցի մէջ, կապածը թաթախում են սառը ջրի մէջ և քամում են լողարանի մէջ, այնքան անգամ թաց են անում և քամում, մինչև դուրս եկող ջուրը այլ ևս գեղին գոյն չ'ունենաց: Երեխային պահում են լողարանի մէջ օ— $15$  րոպէ: Լողարանից հանելուց յետոյ երեխայի մարմինը չոր շորով ցամաքեցնում են՝ շփելով, և ապա փաթաթում են ֆլանելի կամ բրդի վերմակի մէջ: Հարկաւոր է երեխայի ծարաւը ամոքել, բայց ոչ գինով, որովհետև զինին երբեմն փախելը սաստկացնում է, այլ սօղայի ջուրը ածում են մի թէցի բաժակի մէջ և աւելացնում են նորա վերայ մէկ կամ երկու թէցի գղալ կոնեակ, թողնում են մի քանի ժամանակ և ապա ամեն տասն րոպէին տալիս են երեխային մէկ թէցի գղալ: Սօղայի ջրի փոխանակ կարելի է վեր առնել սովորական սառը թէց կամ սեսուրճ նոյնպէս սառը և երկուսն էլ կոնեակի հետ խառնած կամ ձւի սպիտակուցի ջուր՝ նոյնպէս կոնեակով: Կոնեակի փոխանակ կարելի է ոսմ վեր առնել. խակ եթէ սառուց կայ, կարելի է մանր կտորներ կամ առանձին տալ երեխային, որ կուլ տայ կամ նոյն խակ ըմպելիքների հետ խառն: Բայց ոչ մի կերպով ոչ մէկ կերակուր չը տալ, ոչ շողիաւոր հեղուկ, ոչ ծծի կաթ և ոչ այլ ինչ, քանի երեխան շարունակում է փախել և լուծել: Խակ երբ կը տեսնենք, որ երեխան ամբողջ մի օր էլ չի փախում և լուծում, այն ժամանակ հարկաւոր է սկսել կամ ծիծ տալ կամ կաթի խառնուրդ, վերջինս սառցի վերայ սառցրած՝ համեմատ այն կանոններին, որոնց մասին արդէն խօսած ենք. սակայն, այժմ ևս կրինում ենք՝ փոքր քանակութիւնով երկու կամ մի ժամը մի անգամ:



ԳԻՒՆ Է 5 ԿՈՊ.

Վաճառւում է Թիֆլիսի հայ գրախանությունում և «ԱՌԻՖԱ», -ի խմբագրատանը:

Արդիւնքը հեղինակի կողմից յատկացրած է «Մոլճ»-ի Փոխառության ազգական Գանձարանին:

ՀՀՀՀ

2438

2013

«Ազգային գրադարան»



NL0073757

